

**Հարցաշար**  
**Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**  
**9-րդ դասարան**  
**Տևողությունը 180 րոպե**

Ամպշող օր էր: Գյուղի կեռմանաշատ արահետով դեպի մոտակա լիճն էին գնում երկու մտերիմ ընկերներ՝ միաժամանակ բուռն քննարկելով նախորդ օրը տեղի ունեցած տհաճ միջադեպը: Արդեն լճի մոտակայքում էին, երբ նրանց զրույցն անսպասելիորեն վերածվեց վեճի, և պատանիներից մեկը հանիրավի մի շռայուն ապտակ հասցրեց մյուսին: Վերջինս, իհարկե, այլայլվեց, սակայն առանց որևէ բառ ասելու կռացավ և ավազի վրա գրեց. «Այսօր լավագույն ընկերս ապտակեց ինձ»: Տեսնելով ընկերոջ գրածը՝ տղան կարկամեց. գոջումի պես մի բան դրոշմվեց շռագունած դեմքին: Հետո անձայն շարունակեցին ճանապարհը: Ճնշող լռությունը, սակայն, երկար չտևեց: Տեղ հասնելուն պես ուրախ ճիչերով մտան ջուրը: Նա, ով դեմքին ապտակ էր ստացել, սուզվելով հայտնվեց լճի վտանգավոր հատվածում, որտեղ լողն արգելվում էր: Եվս մի քանի վայրկյան, և ջրահեղձ կլինեք, եթե ընկերը շուտափույթ չհասներ օգնության: Խեղդվելուց փրկվածը երախտագետ հայացքով նայեց ընկերոջը, ապա մոտեցավ ավամերձ ժայռին և սրածայր քարով սկսեց փորագրել. «Այսօր իմ լավագույն ընկերը փրկեց կյանքս»: Տղան, ով ապտակել ու նաև փրկել էր ընկերոջ կյանքը, տարակուսած հարցրեց .

- Երբ ապտակեցի, գրեցիր ավազին. հիմա ինչո՞ւ ես ժայռի վրա փորագրում:
- Փորագրում եմ, ....
- Լսելով ընկերոջ պատասխանը՝ ....

1. Շարունակի՛ր անավարտ նախադասությունները: (2 միավոր)
2. Մեկական բարդ նախադասությամբ տո՛ւր քո գնահատականը պատանիների արարքի վերաբերյալ: (2 միավոր)
3. Գրի՛ր տեքստում գործածված *պես, նաև, որտեղ, ով, հանիրավի* բառերի խոսքիմասային արժեքները՝ նշելով տեսակը: (1 միավոր)
4. Գրի՛ր *Նա, ով դեմքին ապտակ էր ստացել, սուզվելով հայտնվեց լճի վտանգավոր հատվածում, որտեղ լողն արգելվում էր* նախադասության շարահյուսական հոմանիշը: Նշի՛ր ստորադաս նախադասությունների բնույթը: (2 միավոր)
5. Տրված բառախմբից առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք կարող են հասկանիշ դառնալ **տեսարան** գոյականի համար. *գեղգեղուն, ահագորու, շնկշնկան, հոգեցունց, նանրամիտ, հրաշք, գողտրիկ, հոլանի, բացեիբաց, վեհերոտ, սրտմաշուկ, անպարկեշտ, ժանտ, վանող, նազաճեմ, գորշ, պճնամոլ, ակնապարար, կարկառուն, դյուրընկալ*: (1 միավոր)
6. Գրի՛ր *հանիրավի, ստեպ-ստեպ, վարսեղ, ջրհորդան, ծավի, երկնուղեշ, բռնագրոսիկ, ներքինապետ, դազանակ, վարուժան* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
7. Կազմի՛ր հականիշ դարձվածքներ *սիրտ, երես, գլուխ, խելք* բառերով: (2 միավոր)
8. Կազմի՛ր 4 նախադասություն *ծաղկել* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
9. Բացատրի՛ր «Մորփեոսի գիրկն ընկնել» և «ճաշից հետ մանանեխ» թևավոր խոսքերը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Արվեստի հրաշագործ ուժը » վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)